# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 6 | Տաբատ ՝ շտաբային, ամենօրյա Երեսացու կտորը ռիպստոպ տեսակի, մուգ կանաչավուն 235գ/մ2 մակերեսային խտությամբ, 44 % բուրդ, 54 % պոլիէսթեր և 2 % լաիկրա մանրաթելերից: Աստառը՝ 90գր/մ2 բյազ տեսակի կտորից: Տաբատի արտաքին տեսքը՝ համաձայն հաստատված նմուշի, արտադրվում են 44/2 մինչև 64/6 չափս-հասակի (նմուշը և չափս-հասակային սանդղակը տրամադրվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից): Տաբատը տղամարդու կազմվածքի համար նախատեսված ձևվածքով է, կազմված է առաջամասից, հետնամասից և գոտուց: Առաջամասը՝ կողային գրպաններով, գրպանների միջուկը՝ երեսացու կտորից, կողային կարերում հավասարաչափ անցկացված է 1.8-2մմ լայնությամբ կապույտ կամ կանաչ գույնի 342 գր/մ2 խտությամբ մահուդե երիզներ: Աջ հետնամասում կտրված գրպան՝ կափույրով, որը կոճկվում է մեկ պլաստմասե կոճակով և օղակով: Փողքերի ստորին հատվածը 3սմ ծալված և կարված է գաղտնակարով: Գուլֆիկը մշակվում է զարդակարված և ամրակարված շղթայով, որը գոտու մասում կոճկվում է մետաղյա կեռիկով և մեկ հատ 18մմ կոճակով: Գոտին 8 հատ կամրջակներով է, մինչև 45մմ լայնքով գոտեփոկի անցկացման համար: Պիտակավորումը: Տաբատի ներսից՝ աջ հատվածում, գոտու ներքևից ՝ կարվում է պիտակ՝ արտադրանքի չափս-հասակի (նվազագույնը 25մմ * 25մմ չափերով , գրվածքը՝ լավ տեսանելի), արտադրող կազմակերպության անվանումը արտադրման տարեթիվը (գրվածքը՝ լավ տեսանելի) և խնամքի պիտակը՝ լվացքի, քիմմաքրման, արդուկման թույլատրելի չափանիշների գրառմամբ (գրվածքը՝ անզեն ընթեռնելի): Դիմացի հատվածում՝ վերևից 2-րդ կոճակի վրա պետք է կախված լինի թղթյա պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող |

| | |
|---|---|
| | կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Փաթեթավորումը` եռաշերտ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ, մինչև 10 լրակազմ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ` 1 լրակազմ: Արկղերի և պարկերի չափսերը պետք է համապատասխանեն համազգեստի չափսերին, որպեսզի համազգեստը չճմրթվի: Արկղերը` փակ, պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-24/3-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 6 | Брюки повседневные, штабные Лицевая ткань типа рипстоп, темно-зеленоватого цвета с поверхностной плотностью 235 г/м2, 44% -шерсти, 54% -полиэстера и 2%- волокон лайкры. Подкладка из ткани типа бязи 90 г/м2. Внешний вид брюк- в соответствии с утвержденным образцом, изготавливается в размерах от 44/2 до 64/6 (образец и шкала размеров и роста предоставляются ответственным подразделением). Брюки имеют покрой, предусмотренный для мужской фигуры, состоят из переда, спины и пояса. Передняя часть - с боковыми карманами, внутренняя часть карманов - из лицевой ткани, по боковым швам равномерно распределены полоски из сукна синего или зеленого цвета шириной 1,8-2 мм и плотностью 342 г/м2. Карман с вырезом на правой задней части с клапаном, застегивающийся на одну пластиковую пуговицу с петлей. Ширинка проработана вшитой закрепленной цепочкой с декоративным швом, которая застегивается на части пояса с помощью металлического крючка и одной пуговицы диаметром 18 мм. Пояс состоит из 8 петель шириной до 45 мм - для проведения ремня. Маркировка: На внутренней стороне брюк справа, под поясом, пришивается этикетка с указанием размера и роста изделия (размерами минимум 25 мм x 25 мм, надпись должна быть хорошо видима), название организации-производителя, год выпуска (надпись должна быть хорошо видима) и этикетка по уходу с указанием допустимых норм стирки, химчистки, глажки (надпись - читаема невооруженным глазом). На лицевой стороне, на 2 пуговице сверху, должна быть прикреплена бумажная этикетка, на этикетке должно быть указано название ассортимента, размер, название организации-производителя, год выпуска. Упаковка: В трехслойных |

| | |
|---|---|
| | картонных коробках, в коробке - до 10-и комплектов, ассортимент в прозрачных полиэтиленовых пакетах, 1 комплект в 1 пакете. Размеры коробок и пакетов должны соответствовать размеру униформы, чтобы униформа не смялась. Коробки: закрытые, маркированные, на этикетках должны быть указаны название ассортимента, количество, размеры, название организации-производителя, месяц и год изготовления. |